

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

Հաստատված է
ՀԱՊՀ ԳՄ գիտական խորհրդի 2017 թ. նոյեմբերի 30-ի թիվ 57 որոշմամբ

Տնօրեն՝



Ա.Ռ. Պապոյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2017-2021 թթ.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ԳՅՈՒՄՐՈՒ 2017

ՀԱՊՀ ԳՄ 2017-2021 թթ. Ռեզոլուցիայի պլանի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և պատասխանատուները

| Թ/Թ | Խնդիրը և դրա իրականացման հիմնական միջոցառումները | Ժամ-կետ | Պատասխանատուներ |
|---|---|--------------|--|
| ՆՊԱՏԱԿ 1. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ | | | |
| 1.1. | <i>Նպատակաուղղված իրականացնել Մասնաճյուղի ընդունելության պլանավորումը և ըստ մասնագիտությունների տեղերի բաշխումը՝ մասնագետների աշխատաշուկայի սահմանափակ պահանջարկի պայմաններում</i> | | |
| ա) | Մասնաճյուղի ուսումնամեթոդական բաժնի պարտադիր գործառույթների ցանկում ավելացնել մարզի արտադրական և կրթական միջավայրերի մշտադիտարկման և վերլուծության գործառույթի կազմակերպումը և համակարգումը, սահմանել արդյունքների ներկայացման հաշվետվողականության կարգ | սկսած 2018թ. | ՈՒՄԲ վարիչ |
| բ) | Մշակել ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի Մասնաճյուղի հեռանկարային մասնագիտությունների անվանացանկ և ձևակերպել մասնագիտությունների շրջափոխման չափորոշիչները | 2018 | ՈՒՄԳ փոխտնօրեն 1 |
| գ) | Լիցենզավորել բակալավրական առկա և հեռակա ուսուցման նոր կրթական ծրագրեր | 2018-2021 | ՈՒՄԳ փոխտնօրեններ |
| գ) | Լիցենզավորել մագիստրոսական նոր կրթական ծրագրեր՝ Մասնաճյուղում երկաստիճան կրթություն ստանալու պայմանները բարելավելու համար | 2018-2021 | ՈՒՄԳ փոխտնօրեններ |
| 1.2. | <i>Ըստ հնարավորության ավելացնել և պահպանել Մասնաճյուղում սովորողների թիվը՝ մարզում առկա ժողովրդագրական խնդիրների պայմաններում գործադրելով գովազդարշավի բազմազան հնարավորությունները</i> | | |
| ա) | Մշակել Մասնաճյուղի ընդունելության գովազդի միջոցառումների տիպարային պլան և ժամանակացույց՝ կիրառելի ամենամյա, շուրջտարյա գովազդի իրականացման համար | 2017 | Ընդ. հանձնաժողովի պատասխանատու քարտուղար, ՈՒՄԲ վարիչ |
| բ) | Ամբիոններում, մինչբուհական կրթության բաժնում ներդնել տվյալ կրթական ծրագրերի գովազդի իրականացման պլանավորում, նախատեսելով դիմորդների հետ շուրջտարյա անվճար խորհրդատվական աշխատանք և այդ պլանների իրականացման հաշվետվողականություն | սկսած 2018թ. | Ամբիոնների վարիչներ, ՄԿԲ վարիչ |
| գ) | Ընդլայնել հիմնական կրթության հիմքով Միջին մասնագիտական կրթական ծրագրերով Մասնաճյուղի ընդունելության մոտակա և հեռանկարային մասնագիտությունների ցանկը՝ անհրաժեշտության դեպքում լիցենզավորելով | 2018-2021 | Տնօրինություն, ՄԿԲ վարիչ |

| | | | |
|---|--|--------------|--------------------------------------|
| | դրանք | | |
| զ) | Հիմնական դոնոր դպրոցների հետ կնքել համագործակցության պայմանագրեր և հաստատել դրանց շրջանակներում համատեղ իրականացվող աշխատանքների պլան-ժամանակացույցեր | 2018-2021 | Տնօրինություն |
| 1.3. | <i>Խթանել Մասնաճյուղում շարունակական և լրացուցիչ կրթության իրականացումը, բազմազանեցնել կրթական նույն ծրագրերով առաջարկվող դասընթացների թիվը, զարգացնել այդ ծառայության հեռավար մատուցման հնարավորությունները</i> | | |
| ա) | Ձևավորել լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերի Երևանյան կրթահամալիրում չկրկնվող դասընթացների ցանկ՝ հաշվի առնելով Մասնաճյուղի իրական հնարավորությունները, Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի, Գյումրիում գործող ՏՏ ոլորտի կազմակերպությունների, տեքստիլ և թեթև արդյունաբերության ձեռնարկությունների պահանջարկը | 2018 | ՈԻՄԳ փոխտնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| բ) | Երևանյան կրթահամալիրի հետ համատեղ՝ չկրկնվող դասընթացների համար մշակել լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպման հեռավար ուսուցման ձևեր | 2019 | ՈԻՄԳ փոխտնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| գ) | Մասնաճյուղի կայքում առանձին էջով ներկայացնել շարունակական և լրացուցիչ ուսուցման դասընթացները և դրանց մասնակցելու պայմանները | 2018 | ՈԻՄԲ վարիչ |
| դ) | Ապահովել Մասնաճյուղում որոշակի դասընթացների հեռավար ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրում՝ շարունակական մասնագիտական կրթության և հեռակա ուսուցման գործընթացներում հետագայում կիրառելու նպատակով | Սկսած 2018թ. | Ուսում. ստորաբաժանումների ղեկավարներ |
| ՆՊԱՏԱԿ 2. ԲԱՐՁՐՈՐԱԿ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ | | | |
| 2.1. | <i>Ապահովել կրթության որակի վերահսկման առավել արդյունավետ գործընթաց՝ ուսուցման որակի վրա ազդող գործոնների մշտադիտարկման, գնահատման և բարելավման միջոցով, դասավանդման, ուսումնառության կազմակերպման, ակադեմիական առաջադիմության ամփոփման գործառույթների բարելավում՝ ըստ անհրաժեշտության առցանց համակարգով առարկաների դասավանդման կիրառմամբ</i> | | |
| ա) | Ներդնել և հնարավորինս լիարժեք կիրառել ՀԱՊՀ որակի ապահովման էլեկտրոնային առցանց համակարգը (ՈԱԷԱՀ)՝ ընդլայնելով դրա օգտագործման գործառույթային հնարավորությունները | 2018-2021 | ՈԻՄԳ փոխտնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| բ) | Իրականացնել սոցիոլոգիական ամենամյա առցանց հարցումներ՝ կրթական ծրագրերից և | 2018-2021 | ՈԻՄԲ վարիչ |

| | | | |
|--|--|--|--|
| | դասավանդման մեթոդաբանությունից ուսանողների, շրջանավարտների և մյուս շահառուների բավարարվածության գնահատման նպատակով | | |
| զ) | Երևանյան կրթահամալիրի հետ համաձայնեցված Մասնաճյուղում ներդնել դասախոսական կազմի վարկանիշային գնահատման էլեկտրոնային առ-ցանց համակարգը | 2018-2021 | ՈԻՄԲ վարիչ ՏՀՄԲ վարիչ |
| դ) | Մասնաճյուղի ՈԻԽ առաջարկությամբ ուսանողների ընդգրկում դասախոսների աշխատանքի գնահատման ուսանողական հարցումների գործընթացում | սկսած 2018թ. | ՈԻՄԲ վարիչ ՈԻԽ նախագահ |
| ե) | Դասավանդման գործընթացում նոր տեխնոլոգիաների պարտադիր կիրառման պլանավորում և ժամանակացույցի մշակում, այդ նպատակով դասախոսների վերապատրաստում, առանձին դասընթացների համար հեռաուսուցման կիրառում | սկսած 2018թ. | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՈԻՄԲ վարիչ ՏՀՄԲ վարիչ |
| 2.2. | <i>Իրականացնել Մասնաճյուղում գործող ուսումնական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային վերանայման, ինչպես նաև ամբիոնները ուսումնամեթոդական նոր նյութերով շարունակաբար համալրման գործընթաց</i> | | |
| ա) | Մասնաճյուղի ամբիոնների ծրագրամեթոդական ապահովվածության ուսումնասիրություն՝ դրա բարելավման նպատակով, առկա խնդիրների վերլուծություն և լուծման առաջնահերթությունների ձևակերպում | 2018-2021, յուր. ուստար. վերջ | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| բ) | ՈԻ-ուսումնամեթոդական նյութերի պատրաստման պատվերային համակարգի ներդրում և 2018-2021թթ. համար պատվերների ժամանակացույցային պլանի կազմում | սկսած 2018թ. | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| գ) | Մասնաճյուղում մշակվող դասընթացների առարկայական ծրագրերի մշակման գործընթացում գործատու կազմակերպությունների կողմից պարտադիր գրախոսման պահանջի ներդրում | սկսած 2018թ. | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| դ) | Արտադրական և հետազոտական պրակտիկաների կազմակերպման համար առկա և նոր գործընկեր կազմակերպությունների հետ պայմանագրերի թարմացում և կնքում | սկսած 2018թ. | Ամբիոնների վարիչներ, ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| ե) | ՀԱՊՀ կարիերայի կենտրոնի հետ համատեղ աշխատաշուկայի և նրա զարգացման միտումների վերլուծություն՝ կրթական ծառայությունների առաջարկի ճշգրտման նպատակով | 2017 – 2020 | Տնօրինություն, ՈԻՄԲ վարիչ |
| ՆՊԱՏԱԿ 3. ՄՐՑՈՒՆԱԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՄԲ | | | |
| 3.1. | <i>Զարգացնել Մասնաճյուղի գիտական ներուժը՝ Համալսարանի ասպիրանտուրայի</i> | | |

| և հայցորդական ինստիտուտի հնարավորությունների օգտագործմամբ | | | |
|--|--|-----------------|--------------------------------------|
| ա) | Մասնաճյուղի 2017-2021թթ. ասպիրանտուրայի ընդունելության հեռանկարային պլանի ձևավորում | 2018թ. | Տնօրեն, ՈւՄԳ փոխտնօրեններ |
| բ) | Մասնաճյուղում ամբիոնի և դասախոսի աշխատանքի գնահատման չափորոշիչի մշակում և այդ աշխատանքներում ուսանողների ներգրավման պարտադիր պայմանի ձևակերպում | 2018թ. | Տնօրեն, ՈւՄԳ փոխտնօրեններ |
| գ) | Երիտասարդ դասախոսների գիտական աշխատանքի կատարման դրամական խրախուսման կանոնակարգի մշակում և ներդրում | 2019թ. | Տնօրեն, ՈւՄԳ փոխտնօրեններ |
| դ) | Ամբիոնների դասախոսական համակարգում որոշակի տարիքային խմբի երիտասարդ մասնագետներ ունենալու պահանջի ձևակերպում և դրա կատարման վերահսկողության իրականացում | 2018-2019 ուստ. | Տնօրեն, ՈւՄԳ փոխտնօրեններ ՈւՄԲ վարիչ |
| 3.2. | <i>Ապահովել Մասնաճյուղում կատարվող գիտական աշխատանքների և հատկապես ֆինանսավորվող հետազոտական ծրագրերի ծավալի ու արդյունավետության աճ՝ Երևանյան կրթահամալիրի ամբիոնների գիտամանկավարժական ներուժի, փորձի և օժանդակության արդյունավետ օգտագործման ճանապարհով</i> | | |
| ա) | Կազմել Շիրակի մարզի համար գիտական կարևոր և գերակա ուղղություններով կիրառական հետազոտությունների և փորձարարական-նախագծային աշխատանքների հեռանկարային պլան | 2018 | Տնօրինություն, ամբիոնների վարիչներ |
| բ) | Մշակել ներքին դրամաշնորհների տրամադրման կանոնակարգ՝ հեռանկարային նախագծերի կարճաժամկետ ֆինանսավորման, մեկնարկային ընկերությունների ստեղծման նպատակով, հստակեցնելով դրա տրամադրման պայմանները և ընթացակարգը և բյուջեում համապատասխան գումարների պլանավորման հայեցակարգը | 2019 | Տնօրինություն |
| գ) | Մշակել և կիրառության մեջ դնել Մասնաճյուղի աշխատակիցների գիտահետազոտական գործունեության խրախուսման ընթացակարգ | սկսած 2018 | Տնօրինություն |
| 3.3. | <i>Ստեղծել նպաստավոր պայմաններ՝ գիտական հետազոտությունների ինովացիոն կողմնորոշման, արդյունքների պատշաճ հրապարակայնացման, դրանց առևտրայնացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար</i> | | |
| ա) | Ստեղծել մշտական կապ և ապահովել տեղեկատվության կանոնավոր տրամադրում և թարմացում Համալսարանում ստեղծվող հետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացումը և ներդրումը կազմակերպող և համակարգող ինովացիոն ծառայության կառույցի հետ | սկսած 2018 | Տնօրինություն, ամբիոնների վարիչներ |

| | | | |
|--|--|--------------|--|
| բ) | Կնքել փոխշահավետ համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր տարաբնույթ հետազոտական, տեխնոլոգիական, նորարարական ընկերությունների հետ՝ Մասնաճյուղի երիտասարդ դասախոսների և լավագույն ուսանողների համար դասընթացների կազմակերպման և հետազոտում աշխատանքի տրամադրման հնարավորության ընձեռմամբ: | 2018-2021 | Տնօրինություն, ՈԻՄԲ վարիչ |
| գ) | Մասնաճյուղի կայքում ստեղծել առանձին էջ կատարվող հետազոտական և ինովացիոն աշխատանքների, դրանց արդյունքների ներկայացման համար | սկսած 2018 | Տնօրինություն, ամբիոնների վարչներ |
| 3.4. | <i>Բարձրացնել ուսանողական գիտական աշխատանքի արդյունավետությունը՝ ուսուցման գործընթացում լայնորեն ներմուծելով և զարգացնելով հետազոտական բաղադրիչը, առավելագույնս խթանելով ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում</i> | | |
| ա) | Ամբիոններում մշակել և հաստատել Համալսարանի ANEL-ի, Մասնաճյուղի Մեխատրոնիկայի լաբորատորիայի, ինչպես նաև Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի «Ճարտարագիտական լաբորատորիաների» հնարավորությունների օգտագործմամբ լաբորատոր աշխատանքների և ուսանողական հետազոտական աշխատանքների իրականացման թեմատիկ պլաններ և հետևել դրանց կատարմանը, որպես ամբիոնի գործունեության գնահատման անհրաժեշտ բաղադրիչ | սկսած 2018թ. | ՈԻՄԳ փոխտնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| բ) | Բակալավրական և մագիստրոսական ուսուցման գործընթացում նախատեսված կուրսային աշխատանքների և նախագծերի առաջադրանքներում ներմուծել հետազոտական տարրեր, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը կատարել հետազոտական տարրի ներմուծման հնարավորության հաշվառմամբ | սկսած 2019թ. | ՈԻՄԳ փոխտնօրեններ, ամբիոնների վարիչներ |
| գ) | Կազմակերպել ամենամյա ուսանողական հետազոտական աշխատանքների սեմինար լսումներ կամ տարեկան գիտաժողովներ՝ «Ուսանողական գիտական ընկերության» գործունեության վերակազմակերպման և ակտիվացման ճանապարհով | սկսած 2019թ. | ՈԻՄԳ փոխտնօրեններ, ՈԻԽ նախագահ |
| ՆՊԱՏԱԿ 4. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ | | | |
| 4.1. | <i>Փոփոխել Մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքը՝ ինստիտուտային գիտակրթական կառուցվածքի կազմակերպմանը և կառավարման համակարգի</i> | | |

| | | | |
|---|--|------------|--|
| | <i>արդյունավետության բարելավմանը համահունչ</i> | | |
| ա) | Մշակել Մասնաճյուղի՝ որպես Համալսարանի առանձնացված տարածքային ստորաբաժանման նոր կառուցվածքը, իրականացնել սահմանված կարգով դրա հաստատումը և ապահովել այդ կառուցվածքին սահուն անցման գործընթաց | 2017-2018 | Տնօրինություն Մասնաճյուղի ԳԽ |
| բ) | Մշակել և հաստատել նոր կառուցվածքում վարչական աշխատողների միջև գործառույթների բաշխման նոր կանոնակարգ, ինչպես նաև Մասնաճյուղի ստորաբաժանումների նոր աշխատակարգեր, հստակեցնելով ստորաբաժանումների գործառույթների շրջանակները | 2018 | Տնօրինություն Մասնաճյուղի ԳԽ |
| գ) | Իրականացնել Մասնաճյուղի վարչական կազմի պլանային, պարբերական վերապատրաստման գործընթացը՝ ծառայողական անհրաժեշտ հմտությունների և որակների բարելավման նպատակով | 2018-2020 | Տնօրեն ՈԻՄԲ վարիչ, ՏՀՄԲ վարիչ |
| 4.2. | <i>Ընդլայնել և խորացնել Մասնաճյուղում ուսանողական ինքնավարության շրջանակները</i> | | |
| ա) | Մասնաճյուղի կառավարման, կրթության որակի մշտադիտարկման աշխատանքային խմբերում անվերապահորեն ներգրավել ՈԻԽ կողմից երաշխավորված ուսանողների | սկսած 2018 | Տնօրինություն, ՈԻԽ նախագահ |
| բ) | Օժանդակել Մասնաճյուղի ուսանողական կառույցի կողմից ծրագրերի և միջոցառումների իրականացմանը՝ Մասնաճյուղի տարեկան ծախսերի բյուջեում հնարավորության սահմաններում նախատեսելով ֆինանսական միջոցներ, կազմակերպել անհրաժեշտ նյութերի և ծառայությունների գնման գործընթաց | սկսած 2018 | Տնօրինություն, ՈԻԽ նախագահ |
| ՆՊԱՏԱԿ 5. ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՄԱՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ | | | |
| 5.1. | <i>Ապահովել պայմաններ՝ Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող որակական պահանջների կատարման համար</i> | | |
| ա) | Իրականացնել Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի գնահատում՝ առաջիկա տարիներին նրա անհրաժեշտ համալրման և սահուն սերնդափոխության համար | 2018 | Տնօրեն, ՈԻՄԳ փոխտնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| բ) | Իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացում՝ լայնորեն կիրառելով պարտադիր պլանային և շարունակական մասնագիտական վերապատրաստումներ | 2018-2021 | Տնօրեն, ՈԻՄԳ փոխտնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |

| | | | |
|-------------|---|-------------|--|
| գ) | Ապահովել երիտասարդ դասախոսական կադրերի պատրաստումը և գիտահետազոտական նախագծերում նրանց ներգրավումը՝ որպես ամբիոնների և դրանց աշխատանքը համակարգող Մասնաճյուղային կառույցի գործունեության արդյունավետության գնահատման չափանիշ | 2018-2021 | Տնօրինություն, Մասնաճյուղի ԳԽ, Ամբիոնների վարիչներ |
| դ) | Մշակել դասախոսների ստեղծագործական և ծառայողական արդյունավետ աշխատանքի գնահատման և խրախուսման միջոցներ | 2018 | Տնօրինություն, Մասնաճյուղի ԳԽ |
| 5.2. | <i>Մշակել վարչակազմի երիտասարդացման օպտիմալ հաստիքացուցակ՝ պայմանավորված Մասնաճյուղի կառուցվածքային փոփոխությամբ</i> | | |
| ա) | Ապահովել վարչակազմի լրիվ դրույքաչափերով աշխատող աշխատակիցների թվի աճ՝ հաստիքացուցակի մշակման և օպտիմալացման, պարտականությունների վերաբաշխման ճանապարհով | 2018-2021 | Տնօրինություն |
| բ) | Իրականացնել Մասնաճյուղի վարչակազմի պարբերական և պլանային կատարելագործումը՝ կառավարման նոր մեթոդների յուրացման և ներդրման նպատակով | 2018-2021 | Տնօրինություն |
| գ) | Առավելագույնս ապահովել դասախոսական կազմի մասնակցությունը Մասնաճյուղի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում | 2018 - 2021 | Տնօրինություն |
| 5.3. | <i>Ապահովել պայմաններ՝ Մասնաճյուղում բարեվարքության և բարոյահոգեբանական անհրաժեշտ մթնոլորտի ստեղծման ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար, ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության իրականացման համար</i> | | |
| ա) | Կազմավորել էթիկայի հանձնաժողով Մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների մասնակցությամբ | 2018 | Տնօրինություն, Մասնաճյուղի ԳԽ |
| բ) | Նպաստել Մասնաճյուղի վարչական կազմի, արհեստակցական կազմակերպության և ուսանողական խորհրդի միջև համագործակցության արդյունավետ միջավայրի ստեղծմանը | 2018-2021 | Տնօրինություն, ՈԻԽ, ԱԿ նախագահ |
| գ) | Ապահովել նորմատիվ բոլոր փաստաթղթերի հրապարակայնացումը և հասանելիությունը ստորաբաժանումներին, ուսանողական խորհրդին, արհեստակցական կազմակերպությանը՝ ուսանողների և աշխատակիցների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելով նպատակով | 2018-2021 | Տնօրինություն |
| դ) | Ապահովել ուսանողների անկաշկանդ մասնակցությունը պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության գնահատման և օբյեկտիվ տեղեկություններ ստանալու հարցում՝ | 2018թ. | Տնօրինություն, ՈԻՄԲ վարիչ, ՈԻԽ նախագահ |

| | | | |
|---|--|--------------|--|
| | նկատված թերացումների վերացման նպատակով | | |
| ե) | Նպաստել ուսանողական խորհրդի կողմից Մասնաճյուղում «Ազգ-Բանակ» շրջանակային միջոցառումների իրականացմանը՝ ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով | 2018-2019 | Տնօրինություն, ՈԻԽ նախագահ |
| ՆՊԱՏԱԿ 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ | | | |
| 6.1. | <i>Մասնաճյուղի տարեկան ֆինանսական հիմնավորված բյուջեի մշակում՝ նպատակաուղղված առաջադրված ռազմավարական խնդիրների իրագործմանը</i> | | |
| ա) | Կիրառել երկարաժամկետ պլանավորում Մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառներում՝ 2017-2021 թթ. | 2018-2021 | Տնօրինություն |
| բ) | Ապահովել Մասնաճյուղի տարեկան բյուջեի, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի ֆինանսական ծախսումների նախագծերի բաց և թափանցիկ քննարկում բոլոր ստորաբաժանումներում՝ սահմանված կարգով այն հաստատելուց առաջ | 2018-2021 | Տնօրինություն |
| 6.2. | <i>Բազմազանեցնել Մասնաճյուղի ֆինանսական ներհուսքը՝ ստորաբաժանումների և առանձին ստեղծագործական խմբերի մասնակցության ապահովմամբ</i> | | |
| ա) | Մեծացնել գիտակրթական լրացուցիչ ծառայություններից, ձեռնարկատիրական գործունեությունից գոյացած միջոցների հաշվեկշիռը Մասնաճյուղի եկամուտների ընդհանուր ծավալում | 2018-2021 | Տնօրեն, փոխտնօրեններ |
| բ) | Մշակել առանձին ստեղծագործական խմբերի ձեռներեցության, ֆինանսական վերադարձելիությամբ և ցածր ռիսկայնությամբ կարճաժամկետ ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ներքին դրամաշնորհային ֆինանսավորման կարգ, դրա համար համապատասխան միջոցներ նախատեսելով տարեկան ծախսերի բյուջեում | սկսած 2019թ. | Տնօրեն, փոխտնօրեններ, Մասնաճյուղի ԳԽ |
| գ) | Զարգացնել համագործակցությունը աջակից և բարեգործական, պատվիրատու կազմակերպությունների հետ՝ մասնակից դարձնելով նրանց Մասնաճյուղի զարգացման ծրագրերին | 2018-2021 | Տնօրեն, փոխտնօրեններ |
| 6.3. | <i>Ապահովել Մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը</i> | | |
| | Ապահովել ֆինանսական և նյութական ռեսուրսների ճշգրիտ հաշվառում, դրանց պահպանում, խիստ նպատակային օգտագործում | 2018-2021 | Տնօրեն, ՏԳ և ԵՍ փոխտնօրեն, Գլխ. հաշվապահ |
| | Վարել հաստիքախնայողության խստագույն ռեժիմ՝ ստեղծելով նվազագույն թվաքանակով վարչակառավարչական կազմ՝ ունակ | 2018-2021 | Տնօրեն, Գլխ. հաշվապահ |

| | | | |
|---|--|-----------|--|
| | իրականացնելու Մասնաճյուղի ռազմավարական խնդիրների լուծման հետ կապված գործառույթները | | |
| | Իրականացնել աշխատանքային տեղերը ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական միջոցներով ապահովելու գործընթաց | 2018-2021 | Տնօրինություն |
| ՆՊԱՏԱԿ 7. ԱՐԴԻԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ | | | |
| 7.1. | <i>Գտնել հնարավորություն՝ լուծելու Մասնաճյուղի ուսումնական մակերեսների համալրման հիմնահարցը</i> | | |
| ա) | Մշակել առաջարկություններ Մասնաճյուղն ուսումնական անհրաժեշտ տարածքներով բավարարելու համար՝ այս հրատապ խնդրի լուծմանը ներգրավելով ՀԱՊՀ կառավարման բարձրագույն մարմինն և տեղական ինքնակառավարման մարմիններին: | 2018-2021 | Տնօրինություն |
| բ) | Համապատասխան վերադաս կազմակերպություններում հիմնավորել Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի հարևանությամբ Ջիվանու 74 հասցեում տեղակայված և չօգտագործվող հիվանդանոցային նախկին շենքը Մասնաճյուղին տրամադրելու նպատակահարմարությունը: Համալսարանի աջակցությամբ աշխատել գտնել գործընկեր կազմակերպություններ՝ Մասնաճյուղի հիմնադրման 60-ամյա տարելիցին (2019թ.) այդ մասնաշենքի վերանորոգման համար | 2018-2021 | Տնօրինություն |
| 7.2. | <i>Ապահովել Մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման որակական պահանջների իրականացումը</i> | | |
| ա) | Հաստատել Մասնաճյուղի մասնաշենքերը վերանորոգելու, լսարանային ֆոնդը ժամանակակից գույքով և սարքավորումներով հագեցնելու հեռանկարային պլան | 2018 | Տնօրինություն |
| բ) | Մշակել Մասնաճյուղում ուսումնական և օժանդակ տարածքներն առավել արդյունավետ օգտագործելու սխեմաներ՝ ստորաբաժանումների միջև առկա տարածքների օպտիմալ վերաբաշխմամբ | 2018-2021 | Տնօրինություն |
| գ) | Օգտագործել Գյումրու Տեխնոլոգիական կենտրոնի ընձեռած հնարավորությունները՝ խթանելով և զարգացնելով Մասնաճյուղի և ԳՏԿ-ի միջև համագործակցային կապերը: | 2018-2021 | Տնօրեն, ՈԻՄԳ փոխտնօրեններ, ամբ-ների վարիչներ |
| դ) | Վերանորոգել Մասնաճյուղի տարածքում գտնվող բաց մարզահրապարակը և կառուցել մեկ նոր բաց (վոլեյբոլի) խաղահրապարակ | 2019 | ՏԳ և ԵՍ փոխտնօրեն |

| | | | |
|--|--|--------------|-------------------------------|
| ե) | Իրականացնել Մասնաճյուղի էներգախնայողության, կաթսայատան և մասնաշենքերի ջեռուցման և ջրամատակարարման համակարգերի վերակառուցման և արդիականացման փուլային գործընթաց: | սկսած 2018թ. | ՏԳ և ԵՍ փոխսնօրեն |
| 7.3. | Նպաստել Մասնաճյուղի սոցիալական ծրագրերի զարգացմանը | | |
| ա) | Մշակել և պահպանել Մասնաճյուղի տարեկան բյուջեում սոցիալական ծրագրերի և միջոցառումների համար հատկացումների հիմնավորված համամասնություն: | 2018-2021 | Տնօրինություն, |
| բ) | Մասնաճյուղի ուսանողների և աշխատակիցների համար ստեղծել ֆինանսական աջակցության հնարավորություններ՝ Համալսարանի մարզաառողջարարական բազաներից օգտվելու նպատակով | 2018-2021 | Տնօրինություն, |
| գ) | Խթանել ուսանողների և աշխատակիցների ակտիվ մասնակցությունը համալսարանական մշակութային և մարզական կյանքին | 2018-2021 | Տնօրինություն, ՈԻԽ նախագահ |
| դ) | Վերանորոգել և վերասարքավորել Մասնաճյուղի բուֆետ-ճաշարանը | 2018 | ՏԳ և ԵՍ փոխսնօրեն |
| ՆՊԱՏԱԿ 8. ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ | | | |
| 8.1. | Ընդլայնել և արդյունավետ դարձնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը Մասնաճյուղի ուսումնական գործընթացի իրականացման և վերահսկողության ոլորտում | | |
| ա) | Բոլոր ամբիոնների համար հաստատել առարկայացանկեր և տարեկան պլան-ժամանակացույցեր, դասավանդման ընթացքում որոշակի էլեկտրոնային նյութերի կիրառումն ապահովելու նպատակով | 2018-2021 | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| բ) | Ապահովել Մասնաճյուղի գրադարանի էլեկտրոնային կրթական ռեսուրսների պլանային պարբերական թարմացումը՝ պայմանավորված նոր ուսումնական պլաններով, նոր տեխնոլոգիաների, գիտական նվաճումների մասին տեղեկատվության մատուցման անհրաժեշտությամբ | 2018-2021 | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| գ) | Ապահովել Մասնաճյուղի միացումը Համալսարանի ուսումնական գործընթացի կառավարման էլեկտրոնային համակարգին | 2019թ. | Տնօրինություն, ՏՀՄԲ վարիչ |
| դ) | Ապահովել տեխնիկական հնարավորություններ՝ ըստ անհրաժեշտության առցանց դասախոսություններ իրականացնելու համար | սկսած 2018թ. | ՏՀՄԲ վարիչ |
| 8.2. | Գատարելագործել Մասնաճյուղի ինֆորմացիոն բազան՝ ապահովելով կրթական, հետազոտական, կառավարման ռեսուրսների համընդհանուր մատչելիություն և տեղեկատվության հանրայնացում | | |

| | | | |
|---|---|--------------|-------------------------------|
| ա) | Իրականացնել Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների առկա վիճակի ուսումնասիրություն՝ զարգացման առաջնահերթությունները որոշելու, տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունն և օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով | 2018-2021 | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| բ) | Մշակել և հաստատել Մասնաճյուղի ինֆորմացիոն ենթակառուցվածքի, համակարգչային տնտեսության արդիականացման պլան-ժամանակացույց | 2019 | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՏՀՄԲ վարիչ |
| գ) | Մասնաճյուղում ներդնել Համալսարանում կիրառվող ակադեմիական առաջադիմության արդյունքների էլեկտրոնային գրանցման և կառավարման համակարգը | 2019 | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՏՀՄԲ վարիչ |
| դ) | Ապահովել ուսումնական գործընթացում ուսանող-դասախոս հարաբերումների էլեկտրոնային ձևերի կիրառման տեխնիկական հնարավորություններ | սկսած 2019 | ՈԻՄԳ փոխսնօրեններ, ՏՀՄԲ վարիչ |
| ե) | Մշակել և Համացանցում տեղադրել Մասնաճյուղի արդիականացված Web-կայքը՝ այն համալրելով նաև ռուսալեզու և անգլալեզու տարբերակներով | | ՈԻՄԲ վարիչ, ՏՀՄԲ վարիչ |
| Ն Պ Ա Տ Ա Կ 9. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ | | | |
| 9.1. | <i>Ընդլայնել և բազմազանեցնել գործընկերային կապերը Մասնաճյուղի պրոֆիլին բնորոշ արտադրական ոլորտների և բիզնեսի հաստիքների հետ</i> | | |
| ա) | Նախապատրաստել և կնքել Մասնաճյուղի ու Գյումրու Տեխնոլոգիական Կենտրոնի միջև համագործակցության երկարաժամկետ պայմանագիր | 2018 | Տնօրեն |
| բ) | Ընդլայնել գործատուների ներգրավվածությունը Մասնաճյուղի ուսումնական գործընթացում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության և պաշտպանության, պրակտիկաների կազմակերպման և ուսումնական այլ հարցերում: | սկսած 2018թ. | ՈԻՄԳ փոխսնօրեններ |
| գ) | Կնքել Մասնաճյուղի և գործատուների միջև համագործակցային կապերի վերաբերյալ համաձայնագրեր և ապահովել դրանց դրույթների իրականացման պայմաններ | 2018-2021 | Տնօրինություն |
| 9.2. | <i>Ապահովել Մասնաճյուղի առավելագույն ներգրավումը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, բազմազանեցնել հանրային ծրագրերում Մասնաճյուղի ներգրավման ձևերը</i> | | |
| ա) | Զարգացնել Մասնաճյուղի համագործակցությունը Շիրակի մարզպետարանի և Գյումրու քաղաքապետարանի հետ՝ հանրային կարիքներին ուղղված տարածաշրջանային ծրագրերի ի- | 2018-2021 | Տնօրինություն, Մասնաճյուղի ԳԽ |

| | | | |
|-------------|---|--------------|---------------------------|
| | բականացման համար | | |
| բ) | Ընդլայնել և բազմազանեցնել հասարակության, ԶԼՄ-ների հետ Մասնաճյուղի կապերը, շարունակել օպերատիվ լրատվությունը, սեփական գովազդային նյութերի հրապարակայնացումը | 2018-2021 | Տնօրինություն, ՈԻՄԲ վարիչ |
| գ) | Ձևավորել Մասնաճյուղի գիտակրթական և խորհրդատվական ծառայությունների ցանկը և ապահովել դրա տարածումը հանրության լայն շրջաններում | սկսած 2018թ. | Տնօրինություն, ՈԻՄԲ վարիչ |
| դ) | Իրականացնել Մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն | սկսած 2018թ. | Փոխտնօրեններ, ՈԻՄԲ վարիչ |
| 9.3. | <i>Ընդլայնել և բազմազանեցնել Մասնաճյուղի միջազգային կապերն ու համագործակցությունը միջազգային ծրագրերում</i> | | |
| ա) | Խթանել Մասնաճյուղի ստորաբաժանումների մասնակցությունը Համալսարանի կողմից իրականացվող միջազգային համագործակցության ծրագրերում | 2018-2021 | Տնօրինություն |
| բ) | Աջակցել Մասնաճյուղի աշխատակիցների, ասպիրանտների ու հայցորդների ընդգրկմանը միջազգային գիտական նախագծերում՝ ապահովելով անհրաժեշտ խորհրդատվություն և տեղեկատվություն ֆինանսավորման աղբյուրների որոնման և հայտերի մշակման հարցերում | 2018-2021 | Տնօրինություն |
| գ) | Խրախուսել արտասահմանյան բարձր վարկանիշ և ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում Մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի, ասպիրանտների ու հայցորդների կողմից հոդվածների հրատարակումը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը | 2018-2021 | Տնօրինություն |

Հավելված

Աղյուսակի 4-րդ սյունակում բերված հապավումները

1. ՈԻՄԳ փոխտնօրեն – ուսումնամեթոդական գծով փոխտնօրեն,
2. ՏԳ և ԵՄ փոխտնօրեն – Տնտեսական գործունեության և ենթակառուցվածքների սպասարկման գծով փոխտնօրեն,
3. ՈԻՄԲ – Ուսումնամեթոդական բաժին,
4. ՄԿԲ – Մինչբուհական կրթության բաժանմունք
5. ՏՀՄԲ – Տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժին,
6. ԱԿ - Արհմիութենական կազմակերպություն,
7. ՈԻԽ - ՈԻսանողական խորհուրդ